Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2024 թվականի
Սեպտեմբերի 4-ի թիվ 3 նիստում
Գիտական խորհրդի նախագահ
Ռեկտոր Սրբուհի Գևորգյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԱԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը վճարովի համակարգում սովորող ուսանողների համակազմի առնվազն տաս տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում:
2. Համալսարանում ուսման վարձի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում՝ առկա ուսուցման դեպքում տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին հաջորդող չորս շաբաթների ընթացքում, իսկ հեռակա ուսուցման դեպքում տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող մեկական շաբաթների ընթացքում:
3. Համալսարանը՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.
   1) Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.
   2) Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս.
   3) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ առնվազն 50 տոկոս.
   4) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.
   5) Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.
   6) Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.
   7) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

9) Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, ովքեր ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ՝ առնվազն 50 տոկոսի չափով.

Համալսարանի հայեցողությամբ՝

10) Համալսարանում կամ ԿԳՄՍ նախարարությունում առնվազն հինգ տարի աշխատանքային ստաժ ունեցող հիմնական աշխատողների երեխաներին՝ մինչև 80 տոկոս.

11) Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխաներին մինչև 50 տոկոս.

12) Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում վճարովի ուսուցման համակարգում միևնույն ընտանիքից երկու և ավելի ուսանող ունեցող ընտանիքների ուսանողներին մինչև 30 տոկոս.

13) Երրորդ խմբի հաշմանդամ ուսանողներին մինչև 50 տոկոս.

14) Արցախյան բոլոր պատերազմներում զոհվածների քույրերին և եղբայրներին՝ մինչև 30 տոկոս.

15) Առանձին դեպքերում, Համալսարանի ռեկտորի հրամանով այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

4. Մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

5. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել Համալսարանի կողմից բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու և ակադեմիական պարտքեր չունենալու դեպքում:

6. Սույն կանոնակարգով սահմանված դրույթները տարածվում են այն ուսանողների վրա, ովքեր նախորդող կիսամյակում ցուցաբերել ակադեմիական բավարար առաջադիմություն և միջին որակական գնահատականը բարձր է 65 միավորից:

7. Առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

8. Վերականգնվող, այլ բուհից տեղափոխված կամ մասնագիտությունը (մասնագիտացումը) փոփոխած ուսանողները ուսման վճարի փոխհատուցման համար կարող են դիմել մեկ կիսամյակ Համալսարանում սովորելուց հետո:

9. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը: